մեջ բացատրություն է տված, որ Մովսեսն յուր տնով է նվեր տված, «որ կոռին հողն բանեցնէ» և ԱԲԳԱՒՆԻՆ (կասկածելի է վերծանությունը) հաշուին աղ բէրէ»:

Նշանակում է, Մովսեսին տվել են վանքին, որ կոռի հողը մշակի և աղ բերի։ Բայց ո՞րն է կոռի հողը, վանքապատկան հո՞ղն է կոռով մշակվել և այդ պատճառով կոռի հող կոչվել, թե ուրիշ իմաստ ունի, չի պարզվում։ Առայժմ անհնարին է մեկ երկու արձանագրական տվյալներով լուծել այդ հարցերը։ Պետք է նյութը շատ լինի, որ համեմատության դրվի և լուծվի։

Միանգամայն իրավացի է ընկ. Պողոսյանը, երբ ասում է, որ մինչև մոնղոլների արշավանքը հայ գյուղացին անձնապես կախման մեջ չի գտնվել ֆեոդալից։ Ֆեոդալները Սանահնին բազմաթիվ գյուղեր են նվիրել, իրենց հողերով, լեռներով ու դաշտերով, ջրով ու ջրաղացով, կամ գյուղը նվիրել են իր եռանդամբ։ Համազասպանց Սմբատա որդի Համլիկը 1229 թվականին Կկուաշեն գյուղը նվիրել է Սանահնի վանքին իր եռանդամբ, այսինքն գյուղն իր սահմանի մեջ ունեցած բոլոր հողերով, բայց մարդկանց կամ այդ գյուղի բնակիչների մասին խոսք չկա։

Ինչպես հայտնի է մի շարք արձանագրություններից, Հալալաշեն գյուղը պատկանել է Սանահնի վանքին, բայց № 15 արձանագրությամբ Դավիթ Շոթոռկա որդին մի հալալաշենցի շինական է նվիրել վանքին։ Դա նշանակում է, որ վանքապատկան այդ գյուղի մյուս բոլոր բնակիչները թեև ապրել են գյուղում, այսինքն Հալալաշենի բնակիչներ են հանդիսացել, բայց անձնապես կախում չեն ունեցել վանքից։ Վանքից անձնապես կախում է ունեցել միայն այն մի մարդը, որի մասին գրվել է վերոհիշյալ արձանագրության մեջ։

Վանքին նվիրվող հատ ու կենտ մշակներն ու շինականները սովորական պայմաններում գտնվող գյուղացիներ չեն, այլ ինչ որ արտակարգ պայմաններում գտնվող, անձնական ազատությունից զուրկ մարդիկ, որի հետևանքով նրանք կարող են ծախվել ուրիշի։ Եթե գյուղացին անձնապես կախյալ վիճակում գտնվեր ֆեոդալից, այդ դեպքում գյուղի հետ միասին վանքին կնվիրեին նաև գյուղի բնակիչներին։

Գյուղացիները կալվածատիրոջ պատկանող գյուղում ապրելու համար միայն հարկեր են վճարել և հարկադիր աշխատանք կատարել իրենց տիրոջ համար մինչև մոնղոլական տիրապետության շրջանը։ Հետզհետե վատթարանում է գյուղացիության վիճակը, նրա իրավունքներն այն աստիճան են սահմանափակվում, որ հողի և գյուղի հետ միասին սկսում են ծախել և նվիրել նաև գյուղի բնակչությունը։ Դրան օրինակ կարող է ծառայել Սանահնի 15-րդ դարի վերջերքին պատկանող մի արձանագրություն, որի մեջ վանքի առաջնորդ Արղությանց Բարսեղ եպիսկոպոսը մի շարք հողամասեր, ջրաղացներ, այգիներ, գյուղեր և այլ շարժական ու անշարժ գույք նվիրելուց հետո ավելացնում է, որ տվել է նաև Ը գեղ շինական Սանահնու սուրբ Աստուածածնիս։ Այստեղ ևս թեև անհասկանալի որոշ բաներ կան, բայց կասկածից դուրս է, որ երկու գյուղի բնակիչ է նվիրել վանքին։ Արձանագրության մեջ անհասկանալի է, թե ո՞ր գյուղերի շինականներն են նվիրաբերվել վանքին, շինականների ընդհանուր թիվը որքա՞ն է, ինչու՞ այլ տեղերում այդպիսի բովանդակությամբ արձանագրությունների չենք հանդիպում, թեկուզ 15-րդ դարում և այլն։

Սրանք խնդիրներ են, որոնք թեպետ առայժմ չեն լուծվում, բայց վիմական արձանագրությունների հրատարակության հետ զուգահեռաբար պետք է քննարկվեն և պարզաբանվեն։

Սանահնի և Հաղբատի իրար մոտ գտնվելու հետևանքով, հաճախ նրանց մեջ վեճեր են ծագել վանական սեփականության շուրջը։ Դրանցից ամենամեծը կարելի է համարել այն կռիվը, որ առաջացել էր երկու վանքերի միջև հաղբատցիների շինած բերդի առթիվ։ Այդ կռիվը դադարեցնելու համար միջամտել են նույնիսկ Զաքարյան իշխանները։ Այդ դեպքերի մանրամասն նկարագիրը տվել է Կիրակոս Գանձակեցին։ Նա պատմում է, որ Հաղբատա վանքի վանահայր Հովհաննեսը, որ Զաքարեի և Իվանեի քեռորդին էր, Հաղբատի և Սանահնի միջև ընկած տարածության վրա մի ամրոց է շինել, որպեսզի պատերազմների ժամանակ այնտեղ պահի Հաղբատի ս. Նշանը և պատրսպարի միաբաններին։